

11.116

Ի. ՖԻԼՑԵՐ

32



ԿՈՆԿԱՐԸ, ՆՐԱ ԴԵՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՊԻՈՆՆԵՐԱԿԱՆ ԿՈՆԵԿՏԻՎՈՒՄ

ՅԿԻՈՂ
Ֆ-54

ՊԵՏՏՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 4

1 DEC 2009
24 SEP 2006

31107
8-54

Ի. ՖԻԼՑԵՐ

ԿՈՒՎԱՐԸ, ՆՐԱ ԴԵՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈՆԵԿՏԻՎՈՒՄ

19212

19212
8-54



Խմբագրիչ Ս. Գեվորգյան
Քարտանիշ Վ. Բրդուղյան
Տեխ. խմբագիր Գ. Զեյնյան
Սրբագրիչ Մ. Գեվորգյան
Հանձնված է արտադրության 21 հունիսի 1933 թ.
Ստորագրված է տպելու 2 սեպտեմբերի 1933 թ.
Պետհրատի տպարան

1. ՀԱՆՈՒՆ ՊԻՈՆՆԵՐ ԿԱԴՐԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ

Պիոններական կազմակերպությունը կոչված է ոգնելու բանվոր դասակարգին, սոցիալիստական շինարարության գործում, նա կոչված է այդ շինարարության մեջ ներգրավել աշխատավորների բոլոր յերեսաներին:

Իսկ այդ պահանջում է նրանից վոչ միայն բարելավել իր աշխատանքի բովանդակությունը և մեթոդները, այլև արմատապես բարելավել դեկավարությունը: Հասկանալի յե, վոր վոչ մի կոլեկտիվ չի կարող իրագործել իր առաջ գրված խնդիրները, յեթե այդ կոլեկտիվի դլխին կանգնած չե վորակյալ, քաղաքականապես և մանկավարժութեն պատրաստված կազմակերպիչ-կոլվար: Ահա թե ինչու կուսակցությունը և կոմյերիամիությունը ներկայումս սուր կերպով դնում են պիոններական աշխատանքի համար լավագույն, կայուն կոմյերիտականներ տալու հարցը: Ամփոփելով համամիութենական I հավաքի արդյունքները, Համկոմիուսի (բ) Կենտրոնական Կոմիտեն վորոչեց.

«Կուսակցության բոլոր բլիջները պետք է նշանակեն հատուկ ընկերների՝ մասնակցելու թե՛

գոյություն ունեցող և թե՛ նոր կազմակերպվող պիոներ կուլե՛ տվի աշխատանքին, կոմյերիտմիությունը . . . տք է առաջիկա յերեք ամսվա ընթացքում վերանայի կուլվարների կազմը, կատարի 50,000 ամենաակտիվ և քաղաքականապես գրագետ կոմյերիտականների մոբիլիզացիա վորպես կուլվարներ աշխատելու համար, պատրաստել բոլոր նշանակված կոմյերիտականներին կուլվարների կարճատև և հեռակա կուրսերի միջոցով»:

Սակայն պետք է ասել, վոր վոչ բոլոր կոմյերիտական կազմակերպությունները լավ են վերաբերվել պիոներչարժման կազրերի մոբիլիզացիային և ստուգմանը: Մի քանիսը մոբիլիզացիայի գործում ցույց են տվել այնպիսի վերաբերմունք, վորը խիստ կերպով դատապարտված է ԼԿՅՄ Ց-րդ համագումարի վորոշման մեջ վորպես «չինովնիկական, բյուրոկրատական վերաբերմունք դեպի պիոներչարժումը»:

Կոմյերիտականների բնորությունը և առաջաշումը պիոներ աշխատանքի

Կոմյերիտականների բնորությունը և առաջաշումը պիոներաշխատանքի մինչև այժմ կազմակերպությունների մեծ մասում կրում է պատահական, ձևական բնույթ: Կոմյերիտականներին առաջ քաշելիս մեծ մասամբ հաշվի չեն առնում յերեսանների հետ աշխատելու առանձնահատկությունները, առաջաշվող ընկերների քաղաքական և կուլտուրական զարգացումը, այդ ասպարիզում աշխատելու ցանկությունը և այլն:

«Ընդհանրապես, յերբ կոմյերիտական աշխատանքով բեռնված չե, յերբ նա զբաղված չե վոչ տնտեսական գծով, վոչ ել կուլտաշխատանքով, նրան վորպես «ազատի» ուղարկում են պիոներաշխատանքի: Կուլվարի թեկնածուն դժգոհ, դեմքը կնճռոտում է, փորձում է ոճիքն ազատել, իսկ հետո կամա թե ակամա գնում է կատարելու իր «պարտքը»: Մեղանում քի՞չ կան այդպիսի նման «կուլվարներ» (Ա. Չարկինդ. «Половое воспитание юных пионеров»):

Կուլվարների հոսունությունը

Ամենից առաջ պետք է նշել կուլվարների հսկայական հոսունությունը: Կոմյերիտականների շատ քիչ տոկոսը պիոներ աշխատանքում մնում է յերկու տարուց ավելի (15,4⁰/0): Կուլվարների մեծամասնությունը պիոներաշխատանքում աշխատում է յերեք ամսից մինչև մի տարի: Շատ կուլեկտիվներում մի տարվա մեջ կուլվարները փոխվում են 4-6 անգամ: Մոսկվայի պիոներաշխատողների մարզային խորհրդակցության ժամանակ (1929 թ. աշնանը) նշվեց, վոր խոշորագույն բազաները կուլվարներ չունեն (Մի տիչչինսկի գործարանը, «Սերպ ի Մոլոտ», ԱՄՈ, «Դինամո» և այլն): Բայց զավառում ավելի վատ է, իսկ գյուղում բոլորովին վատ: Այնտեղ ասվեց նույնպես, վոր յերիտասարդ բանվորները չեն ուզում թողնել արտադրությունը և զբաղվել պիոներաշխատանքով:

Կուլվարի աշխատանք կատարել չցանկանալու պատճառները կայանում են նախ նրանում, վոր

կոմյերիտականների մասսայում դեռևս հարկ յեղած չափով չեն գիտակցում յերեխաների հետ աշխատելու նշանակութունը, յերկրորդ, այն դժվարութունները, վորոնց հանդիպում են կոմյերիտականները պիոներաշխատանքում (պիոներ շարժման ցույց տրված թույլ ոգնութունը հասարակական կազմակերպութունների կողմից, կոլեկտիվների նյութական վատ դրութունը, աշխատանքի համար անպատրաստ լինելը, ուրիշ աշխատանքներով ծանրաբեռնված լինելը, թույլ ղեկավարութունը պիոներական բյուրոյի կողմից և այլն) :

Կոլվարների կազմը

Պատահական ընտրութուն կատարելու հետևանքով վատանում է կոլվարների կազմը ամբողջ Միության մեջ: Իհարկե, 50.000 կոլվարների մոբիլիզացիայից հետո, կոլվարների կազմը վորոչ չափով լավացավ: Մոբիլիզացիան պիոներաշարժման համար ղեկավար աշխատողներ ջոկելու ժամանակավոր ձև է, մինչդեռ ղեկավարներ ջոկելու գոյութուն ունեցող սովորական սիստեմը անխուսափելի կերպով վատացնում է կազմը:

Ինտրովին այլ պատկեր են տալիս մոբիլիզացիայի նախնական արդյունքների թվերը: Նոր մոբիլիզացիայի յենթարկված կոմյերիտականների զաւրով կոլվարների ընդհանուր կազմն անպայման

կլավանա: Ահա մոբիլիզացիայի յենթարկվածները պատկերը:

Սոցիալական կազմը %/ով		Կուսակցականութունը %/ով		Տարիք %-ով	
Բանվորներ և բառարկներ	44,1	Կուսանդամ և թեկնածու	11,0	Մինչև 18 տ 19—22 տ.	40,2 52,3
Գյուղացիներ	45,9	Լիցենզիանգամ և թեկնածու	89,0	23 տ. և բարձր	7,5
Ծառայողներ	6,7	Անկուսակցական	—	—	—
Այլք	3,3				

Կոլվարների կազմը լրիվ բնորոշելու համար անհրաժեշտ է նշել կոլվարների կազմի ցած մակարդակը քաղաքական պատրաստության տեսակետից (20,7 տոկոս առաջին աստիճանի և 25 տոկոս յերկրորդ աստիճանի կոմյերիտական քաղպատրաստությամբ) և հանրակրթական պատրաստության տեսակետից (40,2 տոկոս տարրական կրթությամբ): Սա հատուկ նշանակութուն ունի պիոներական կազմակերպության մեջ, վորովհետև ցույց է տալիս, վոր կոլվարներն իրենց զարգացման մեջ յետ են մնում յերեխաներից: Այս յուրահատուկ «մկրատը»—մի ծայրում թույլ զարգացած կոլվարը, իսկ մյուս ծայրում իրենց ղեկավարներից զարգացման ավելի բարձր աստիճանի վրա կանգնած պիոներները (II աստիճանի և յոթնամյակի բարձր խմբերի),—հանդիսանում է պիոներական կազմակերպության շատ թեթութունների պատճառը:

լայն ծավալ ստանալ [ԿՅԵՄ-ում, ուստի, և զարմանալի չէ, վոր կոլեկտիվի շարքերում կուտակվում են զգալի թվով կողմնակի, պատահական տարբեր» (Ձալիինդ, «Половое воспитание юных пионеров»):

Հետևաբար, կոմյերիտմիության հարվածային խնդիրը պետք է լինի կոմյերիտականների մեջ ծավալել մանկավարժական լայն պրոպագանդ: Կոմյերիտմիության մեջ պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, վոր կոմյերիտականներն իրենք ցանկանան աշխատել պիոներներին հետ:

Կոլվարների ամրացումը

Հոսունությունը դադարեցնելու համար կոմյերիտականների ամրացումը պիոներաշխատանքի՝ յերկու տարուց պակաս չպետք է լինի: Այս ժամանակամիջոցը բավական է, վորպեսզի կոլվարի փոփոխությունը բացասաբար չանդրադառնա աշխատանքի վրա: Իսկ կոլվարի ավելի հաճախակի փոփոխությունը վնասակար է աշխատանքի համար, վորովհետև փոփոխության ժամանակ կոլեկտիվի աշխատանքը գրեթե միշտ կանգ է առնում, մինչև վոր կոլվարն ընտելանում է կոլեկտիվին, մինչև վոր պիոներները վարժվում են նոր ղեկավարին, բավական ժամանակ է անցնում զուր տեղը:

Յերկու տարով ամրացնելը ղեռ բավական չէ: Անհրաժեշտ է նույնպես օպերիոնալացման յենթարկել կոլվարի աշխատանքը, հեշտացնել այդ աշխատանքը բջիջի ոգնությամբ, կոլեկտիվի ղեկավարման գործին մասնակից դարձնելով յերեսաների ակտիվը, կուլտուրական ուժերը համալսմբ-

լով կոլեկտիվի շուրջը և այլն: Այստեղ հատուկ նշանակություն է ստանում պիոներական բյուրոյի ղեկավարությունը, վորը ուշադիր վերահսկողությամբ, հրահանգումով, սեմինարներում և խորհրդակցություններում կոլվարներին սխտեմատիկ ուսուցում կազմակերպելով պետք է նպաստի նրանց աշխատանքի դյուրացմանը:

Միաժամանակ, կոլվարների ամրացման համար նշանակություն ունի նաև նրանց պիոներական աշխատանքից հասարակական և մանկավարժական ուրիշ աշխատանքի առաջ քաշելը: Իսկ յեթե, վերջապես, կոմյերիտմիությանը հաջողվի կոլվարներին անպայման թողնել արտադրության մեջ, որական յերկու ժամ աշխատանքից ազատելով, պահպանելով աշխատավարձը, ապա մենք կհարողանանք լուծել կոմյերիտականներին անվերջ հուզող արտադրական հարցը. պիոներաշխատանքի գնալով չկորցնել արտադրական վորակավորումը, չկտրվել գործարանից: Այսպես է դրված կոլվարների հարցը: Այլ է բազաների (քաղաքում) ղեկավարների հարցը: Հաճախ հարկ է լինում նրանց հանել արտադրությունից, վորովհետև նրանց աշխատանքը շատ ավելի ուժ և ժամանակ է պահանջում, քան կոլվարներինը:

Այս աշխատողները, վորոնք կոչված են ղեկավարելու շատ կոլեկտիվներ, կազմակերպչական մեծ աշխատանքի հետ միասին պետք է տանեն մանկավարժական բարդ աշխատանք կոլվարների պատրաստման և յերեխաների դաստիարակության ասպարիզում: Ահա թե ինչու հաճախ անհրաժեշտ է

բազմաների ղեկավարներին ազատել արտադրութեանից, զարձնել պիտոներական վճարովի աշխատողներ:

Ի՞նչ գիտելիքներ, ունակություններ և հատկություններ պետք է ունենա կուլվարը

Վերևում մենք արդեն նշեցինք, վոր կուլվարի աշխատանքը յերեխաների հետ պահանջում է մի շարք հատկություններ, ունակություններ և գիտելիքներ: Այդ նշանակում է, վոր պիտոներական աշխատանքի ուղարկվող կոմյերիտականները վոչ միայն պետք է ունենան այդ հատկությունները նախքան պիտոներների հետ աշխատելը, այլև աշխատանքի ընթացքում պետք է համառ կերպով յուրացնեն այդ հատկությունները, ձեռք բերեն անհրաժեշտ ունակություններ և գիտելիքներ:

Ահա, որինակ, ի՞նչ են պահանջում կուլվարից իրենք պիտոներները և իրենք՝ կուլվարները. 1) կուլվարը պետք է լինի ֆաղափականապես զարգացած կոմյերիտական, (կուլվարը կուսակցական պետք է լինի, նա պետք է լինի կոմյերիտական, քաղաքականապես զրազետ, վորը կարողանա բմբոնել բնթացիկ անցքերը), 2) ծանոթ պիտոներների աշխատանքին (կուրսերում պատրաստված լինել, իմանալ պիտոներների որենքները, ունենալ աշխատանքի նախնական փորձ, կարողանա պատասխանել պիտոներների բոլոր հարցերին), 3) կարգապահ («վոչ դյուրագրգիռ», «վոչ ջղային», «չրդավի», «չհայհոյի», «կռիվ չսարքի», «յերեխաների ներկայութեամբ անվայել բաներ թույլ չտա», «կաղմակերպված», «պարապմունքներին չուշացող»), 4) որինա-

կելի («պարտաճանաչ», «մաքրասեր» «կոկիկ», «չծխի, պուղբա չքսի, սեմիչկա չչրթի», «չլսմի»), 5) լինի պիտոներների ընկերը («վոչ աստիճանով, վոչ տարիքով իրեն բարձր դասի», «իր յեսը» առաջ չբաշի», «կարողանա հեղինակություն ձեռք բերել պիտոներների շրջանում», «լինի ազդեցիկ յերեխաների մեջ»), 6) կարողանա մոտենալ յերեխաներին («հաշվի առնի յերեխաների պահանջները և հետաքրքրությունները և կարողանա արագ կերպով բավարարել նրանց», «լավ ճանաչի բոլոր պիտոներներին միասին և առանձին-առանձին», «չունենա վո՛չ սիրելիներ և վո՛չ ատելիներ», «գդայուն վերաբերմունք ունենա դեպի յերեխաները»), 7) պետք է գիտենա ապրել և աշխատել կուլեկտիվ կերպով, 8) պետք է ուժեղ կերպով հետաքրքրվի իր աշխատանքով, («սիրի յերեխաներին և սիրով աշխատի», «Փորձալիստ չլինի», «չոր, պաշտոնական վերաբերմունք ցույց չտա դեպի իր աշխատանքը», «չհուսահատվի դժվարությունների ժամանակ», «կարողանա յելք գտնել դժվարություններից»), 9) պետք է լինի «տոկուն», «համատ», «առույզ», «ուրախ», 10) իմանա «վարևե Փիզիքական աշխատանք», «մանկարանութեան և մանկավարժութեան հիմունքները», «խաղի և զվարճալիքի ունակություններ»:

Մեզ թվում է, վոր պիտոներների և կուլվարների արտահայտած այս ցանկությունները ընդգրկում են այն գլխավոր պահանջները, վոր մենք պետք է ներկայացնենք կուլվարներին: Մեր թված հատկու-

Թյունները, ունակությունները և գիտելիքները հնարովի չեն, այլ թելադրված են կյանքից: Հարյուրավոր պիոներներ և կոլվարներ իրենց աշխատանքի պրակտիկայում, սեփական փորձով համոզվել են, վոր յեթե կոլվարը չունի վերոհիշյալ հատկությունները, ապա նա չի կարող լավ աշխատել յերեխաների հետ: Յա՛վոք սրտի մենք դեռ շատ քիչ ունենք այնպիսի կոլվարներ, վորոնք ունեն վերոհիշյալ հատկությունները:

Կոլվարների պատրաստութունը և նրանց վորակավորման բարձրացումը

Կոլվարներ պատրաստելու գործը մինչև այժմ շատ թույլ է յեղել: Այստեղ նախ և առաջ դեռ չկա վոչ մի սիստեմ: Յուրաքանչյուր կազմակերպություն ստեղծում է պատրաստման տարրեր ձևեր: Կոլվարների կուրսերը, սեմինարները, խորհրդակցությունները աշխատում են մերթ ընդ մերթ, առանց հաստատուն ծրագրի, առանց լավ դեկավարների և այլն: Պիոներաշխատողներին ինքնակրթության գործը կազմակերպված չէ: Չկան ծրագրեր, դեկավարների կոնսուլտացիաներ և հարմար գրականություն:

Ներկայումս արդեն մշակված է պատրաստման և նախապատրաստման հաստատուն սիստեմ: Այդ սիստեմի համաձայն, կոլվարը նախքան աշխատանքն սկսելը վոչ միայն պարտավոր է, այլև կարող է անցնել շրջանային յերկչարաթյա կուրսեր, վորտեղ նա ստանում է իր աշխատանքի համար ամենահիմնական գիտելիքներ: Իսկ աշխատանքի ժամանակ կոլվարը հնարավորություն ունի

պարապել պիոներաշխատողների հեռակա կուրսերում, վորոնք ոգնում են նրան բարձրացնել վորակավորումը, գրազվել ինքնակրթությամբ: Մոսկվայի Մանկ. Կոմչարթման Կենտրոնական տանը, մարզային պիոներկարենետներում, կոլվարների շրջանային սենյակներում յուրաքանչյուր պիոներ աշխատող կարող է կոնսուլտացիա ստանալ աշխատանքի վերաբերյալ վորևէ հարցի մասին:

Կոլվարների համար առանձնապես արժեքավոր է մի այնպիսի ձև, ինչպիսին է յերկարատև ուսուցումը մանկտեխնիկումների և մանկբուհերի արտադպրոցական բաժանմունքներում: Այստեղ յերկու կամ յերեք տարվա ընթացքում նա կարող է ստանալ խոր պատրաստություն մանկկոմչարթման թեորիայի և պրակտիկայի ասպարիզում:

Արչավը թեորիայի համար, վորն անց է կացվում սոցիալիստական մրցման մեթոդներով, պիոներաշխատողներին ոգնելու համար ներգրավում է մանկավարժական, գիտական, կուսակցական-սրոպագանդիստական լավագույն առաջարկվոր ուժերին և հիմնարկներին:

2. ԿՈԼՎԱՐԻ ԴԵՐԸ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ

Կոլվարների և յերեխաների փոխհարաբերության հարցը ներկայումս հանդիսանում է պիոներական շարժման կարևորագույն հարցերից մեկը: Նայած թե կոլվարն ինչպես կմոտենա յերեխաներին, դրանից մեծ չափով կխսված է կոլեկտիվների

աշխատանքի աշխուժացումը, մանկական ինֆև-
ցործութեան գարգացումը, աշխատանքի բովան-
դակութեան բոլորեցումը յերեխաների պահանջից:
Կուլվարների և յերեխաների սխալ փոխհարաբերու-
թյունների որինակներ

Ամենից առաջ աչքի յեն գարնում հետևյալ
բացասական յերևույթները— հրամայողի, խնա-
մակալի, իշխանավորի զեր խաղալը: Այս թերու-
թյունները նորութուն չեն: Դրանց մասին շատ
անգամ խոսվել է պիոներական զրականութեան
մեջ: Սակայն հարցն այն է, փոր ներկայումս այդ
յերևույթները չափազանց սուր կերպով հակասում
են յերեխաների աճող ախտիվութեանը և ինքնա-
գործութեանը: Վորպես որինակ կրերեմ քաղ-
վածքներ չըջանային մի պիոներ աշխատողի նա-
մակից (Պյատիգորսկ քաղաքից):

1) «Կուլվար Ի. Մ.— հետազոտում եմ նրա
ճամբարը և խնդրում եմ հավաքել ճամբարի խոր-
հուրդը:

— Ի՞նչ պետք է անես խորհուրդը: Յես ինքս
կարող եմ ամեն ինչ ասել և անել,— հայտարարում
է Ի. Մ.:

Բայց յես պնդում եմ: Ճամբարի խոր-
հուրդը հավաքվում է: Յերեխաները լուռ նստած
են: Արտահայտվում և վճռում է ինքը կուլվարը:

Ստուգում եմ ճամբարի ցուցակը և կողմը:
Հեռացողների ցուցակում նկատում եմ հետևյալ
արձանագրութեանը. «Մ. Ա. վտարված է ատամի
խոզանակ գողանալու համար և վորոհեա՛ն նա լուս-

նոտ է»: Յես ապշում եմ արձանագրութեան ձե-
վակերպումից, հարցնում եմ.

— Այս ի՞նչ է նշանակում:

Կուլվարը բացատրում է.

— Յես ինքս եմ վոնտել նրան:

— Իսկ ճամբարի խորհուրդը և պիոներների
հավաքը ի՞նչ են փորոշել:

— Վոչինչ: Յես հարմար չդատեցի այդ հարցը
զնեյ յերեխաների քննութեանը»:

2) Կուլվար Վ. Լ., լուրջ տղա յե: Ողակային
հավաք: Յերեխաները զբաղված են առաջադրան-
քով, նրանց հետ և կուլվարը, փորը հայտարա-
րում է.

— Դե՛, տղերք, լուրջները կգրենք յես և Կուլ-
յան, ձեզ փոր թողնեմ՝ սխալ կգրեք, կամ կփչաց-
նեք, լավ է՝ ինքս կանեմ:

Մի ուրիշ զեպը: Յերեխաները հավաքվել են
ողակային պարապմունքի և վիճում են— ո՞վ փակ-
ցնի պլակատները սանանկյունում: Չե՞ փոր
կուլվարը նրանց չի կարգադրել կախել պլակատնե-
րը: Թող նա դա և ասի, ո՞վ է կատարելու աշխա-
տանքը: Այսպես, յերեխաներն առանց կուլվարի վոչ
մի հարց չեն լուծում և իրենք իրենց վոչինչ չեն
անում»:

3) «Կուլվար Պ. Վ. (աղջիկ): Յերը նա սկսեց
աշխատել կոլեկտիվում, մի քանի ամիս հետո յե-
րեխաները սկսեցին փախչել, ասելով, թե նա ար-
դեն չափահաս է, քիթը բարձր է պահում մեզ հետ
խոսելիս և սիրելիներ ունի»:

4) «Կուլվար Բ. Բ.

յե»— պիո-



ներները սիրում են նրան, բայց կոլեկտիվի որենքները չի կատարում: Կոլեկտիվի հավաքների ժամանակ և խորհրդի նիստերում ծխում է պիոններների հետ միասին և յերբեմն պատմում է իր սիրային արկածները: Նա պիոններներին համարում է իր «ընկերները» և «ընկերաբար է» վարվում նրանց հետ»:

Բերված չորս որինակները բավական ցայտուն կերպով բնորոշում են կոլվարների բացասական դերը. առաջին որինակում կոլվարը իշխանավոր է, նա ինքն է քննում, ինքը վճռում, ինքը «վճռում» յերեսխաններին կոլեկտիվից: Յերկրորդ որինակում կոլվարը խնամակալ է (դայակ), առանց նրան պիոններները վոչ մի քայլ չեն կարող անել, նույնիսկ պլակատ կախել: Յերրորդ որինակում «լուրջ ղեկավարն» է, նրա «չափահասությունից» պիոններները փախչում են, և վերջապես չորրորդ որինակում «պիոններների յուրահատուկ «ընկերն» է, պիոններների սիրելի «բարեկամը», վորը նվաճել է յերեսխանների հեղինակությունը լիտի պատմություններով, պիոներական որենքները խախտելով:

Առաջին յերեք որինակները բավական հաճախակի յերեույթ են պիոներական կազմակերպության մեջ, չորրորդը քիչ է պատահում:

Ի՞նչպես պետք է հասկանալ կոլվարի իսկական դերը

Պիոներական կազմակերպության մեջ, բացի բացասական տիպերից, կան մեծ թվով լավ կոլվարներ, վորոնք հասկանում են իրենց դերը կոլեկտիվում, հանդիսանում են յերեսխանների իսկա-

կան կազմակերպիչները և ոգնականները: Աշխատողի նման տիպի վրա իրոք կարելի յե նայել, — ինչպես ասում է ընկ. Կրուպսկայան, վորպես «պիոններների ղեկավարի, խորհրդատուի, վորպես պիոններների ոգնականի: Մենք չպետք է մոռանանք, վոր պիոներկազմակերպությունը յերեսխանների ինքնուրույն կազմակերպություն է, իսկ կոլվարը նրա ոգնականն է լուրջ»:

Ահա ինչպես են պատասխանում կոլվարներն այն հարցին, թե ի՞նչ մտտեցում պետք է ունենա կոլվարը յերեսխաններին:

— Մտտեցումը պետք է լինի ընկերական: Կոլվարը պետք է հարգի յերեսխաններին և նրանց հետ տարվող աշխատանքը:

— Պետք է արժանանալ յերեսխանների համակրության հարգանքին: Չպետք է յերեսխանների մեջ պարծենալ կոլվարի կոչումով, այլ այնպես անել, վոր նրանք կոլվարին գնահատեն և համարեն իրենց ավագ ընկերը: Չլինել չափից ավելի «մեծ» և «լուրջ» յերեսխանների շրջանում, այլ լինել ճկուն և հնարագետ:

— Արթուն հետևել բոլոր յերեսխաններին, կարողանալ կռահել նրանց բաղձանքները և տրամադրությունները, ոգնել նրանց ձեակերպել այդ տրամադրությունները իրենց գիտակցության մեջ, ոգնելով հաղթահարել վնասակարը և զարգացնել ոգտակարը:

— Պետք է աշխատել, վոր պիոններներն իրենք լինեն ինքնավարության մեջ, վորպեսզի իրենք կարողանան ղեկավարել կոլեկտիվը:

— Փորձառությունից կասեմ, վոր ամենից ավելի հեշտությամբ են յենթարկվում ազդեցության այն յերեսխաները, վորոնց հետ ավելի ժամանակ ես անցկացնում ե անկեղծ գրուցում ես ամեն ինչի մասին: Այն ժամանակ նրանք ել կարծես թե բաց են անում իրենց դաղանիքները: Յեղավ այսպիսի մի դեպք. յերեք պիոներներ զանազան արկածներ նկարագրող գրքեր կարդալուց հետո վորոշել եյին անից փախչել: Նկատելով նրանց պատրաստությունները, յես հավաքեցի յերեսխաներին և կենդանի գրուցցով ցանկություն արթնացրի նրանց մեջ պատմել ճանապարհորդությունների մասին: «Փախտականները» աննկատելի կերպով (թեև դադանապահ տղերք եյին) մեծ հափշտակությամբ պատմեցին, թե ինչպես իրենք մտադրվել եյին փախչել և ճանապարհորդել Սև ծովի վրա: Ոգտվելով գրանից, յես պատկերավոր կերպով նկարագրեցի մի քանի դեպքեր, թե ինչպես յերեսխաների փախուստը վողբալի վախճան ե ունեցել: Այդ գրուցից հետո իմ յերեք պիոներները թողին իրենց փախչելու ծրագիրը և մեծ յեռանդով կպան ուսման: Այդ որվանից անցել ե յերեք տարի և յերեսխաները մինչև այսօր չնորհակալ են ինձանից, վոր յես հետ պահեցի նրանց իրենց մտադրությունից:

— Պետք ե այնպես մտանալ պիոներներին, վոր յես հետ պահեցի նրանց իրենց մտադրումարեն իրենց բարեկամը և ոգնականը, — այդ ժամանակ կոլեկտիվի աշխատանքը լավ կզնա:

Այս պատասխանները վկայում են, վոր կան

բազմաթիվ կոլվարներ, վորոնք ճիշտ են հասկանում իրենց դերը կոլեկտիվում վորպես մանկավարժ—կազմակերպիչներ, վորպես յերեսխաների սովադ ընկերներ:

Այստեղ մենք ցույց տվինք կոլվարների յերկու հակադիր տիպեր. առաջիններն իրենց բացասական և յերկրորդները—իրենց դրական դերով կոլեկտիվներում: Յեղրակացությունն այն ե, վոր բացակայում ե միասնական, ընդհանուր բարոնում այն մասին, թե ինչ ե լինելու կոլվարի դերը կոլեկտիվներում: Այդ գրությունը պատահական չե, վորովհետև մինչև այսօր կազմակերպության դործնական աշխատանքում շատ վատ ե դրված վոչ միայն կոլվարների դաստիարակությունը, այլ և կոլեկտիվում նրանց կատարելիք դերը բացատրելու գործը: Այս փաստը փայլուն կերպով ապացուցվում ե թեկուզ այն բանով, վոր մինչև այսօր չկա մի դիրք, վորը լուսաբաներ կոլվարի դերը կոլեկտիվում:

Կոլեկտիվում կոլվարի դերն ե—լինել յերեսխաների ինֆնագործունեյության կազմակերպիչը

Պիոներական կազմակերպությունը հանդիսանում ե յերեսխաների ինքնագործ կազմակերպություն: Արդեն միայն այդ վկայում ե, վոր կոլվարի դերը իշխանավորի, դայակի, խնամակալի կամ հասարակ ուսուցչի դերը չե, այլ մանկական ինքնագործությունը կազմակերպողի—մանկավարժի դերը:

Ի՞նչ ե նշանակում լինել յերեսխաների ինքնագործությունը կազմակերպող—մանկավարժ: Այդ

նշանակում է աշխատանքը կազմակերպել այնպես, վոր աշխատեն իրենք յերեխաները, վոր յերեխաներն իրենք կարողանան թե՛ նշել, թե՛ կազմակերպել, թե՛ կատարել աշխատանքը:

Ժամանակակից մանկավարժի հիմնական թելադրանքն այն է, վոր նա չգիտե զարթեցնել և կազմակերպել յերեխաների ինքնագործութունը:

Չուր չէ, վոր պիտի երջարժման սկզբնական շրջանում մանկավարժները զարմանում եյին կողմարների աշխատանքի արդյունքներից: Որինակի համար վերցնենք մի մանկատուն, վորտեղ կան 200 յերեխաներ և 10 մանկավարժ: Այդ մանկատան մեջ մանկավարժները վոչինչ չեյին կարողանում անել յերեխաների հետ: Յերեխաները անկարգութուններ եյին անում, վոչինչ չեյին ուզում անել, աշխատում եյին խուսափել ամեն մի աշխատանքից և այլն:

Յեվ ահա մանկատուն է դալիս մի կողմար: Մի քանի ժամանակ անց նկատվում են մեծ փոփոխութուններ. այն է, ինչ առաջ յերեխաներն ատում եյին, այժմ սկսում են սիրով կատարել: Յերեխաները յտում են կորիթարին, սիրում են նրան, մինչդեռ մանկավարժներից շատերին ատում են:

Ի՞նչու յեղան այս փոփոխութունները:

Վորովհետև կողմարը կազմակերպեց յերեխաների ինքնագործութունը, այն ել՝ հետաքրքիր, սիրված ինքնագործութուն, վորին ձգտում են իրենք՝ յերեխաները:

Հենց այն ժամանակ կողմարները կարողանում են համախմբել և կազմակերպել յերեխաներին,

յերբ ընտրում են հետաքրքիր, կենդանի աշխատանք, այսինքն այնպիսի աշխատանք, վոր իրենք յերեխաներն ուզում են կատարել, վորի հանդեպ նրանց հետաքրքրութունը սկսել է «հասունանալ», վորը նրանց համար մոտիկ է և հասկանալի:

Յերեխաների ինքնագործութունը կազմակերպելու համար պետք է կարողանալ լինել նրանց լավ ընկերը: Այդ նշանակում է, վոր կողմարը վոչ միայն պետք է կազմակերպի խաղը, որինակ՝ յերգ, եքսկուրսիա և այլն, այլ և ինքը մասնակցի խաղին:

Յերեխաների հետ աշխատելու պրոցեսում կոլվարը ավելի մտերմանում, ավելի մոտից է ճանաչում նրանց: Բայց դա բոլորը չէ: Կողմարը պետք է ուշադիր լինի յերեխաների դիմումներին: Յեթե նա կարողանա ուշադրութամբ լսել և ժամանակին ոգնել յերեխաներին, այդ մեծ չափով կնպաստի ընկերական հարաբերութուններ հաստատելու յերեխաների հետ և կհեշտացնի կողմարի դաստիարակչական աշխատանքը:

«Կողմար-կոմ յերիտականների առաջ դրված է հետևյալ խնդիրը— զբաղվել իրենց կրթութամբ, դառնալ իսկական կոմունիստ—մանկավարժներ, վորոնք պիտի իմանան մանուկների ուժերի աստիճանը, սովորեն ոգնելու պիտիներների ստեղծագործական բոլոր ընդունակութունները ծավալմանը, սովորեն կառուցել մանկական ամուր կոլեկտիվներ, միաձուլված ընկերականութամբ, փոխադարձ ոգնութամբ աշխատանքի և պայքարի մեջ (Ն. Կրուպսկայա, «Пути пионердвижения»):»

3. ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ
ԿՈՒԵԿՏԻՎՈՒՄ

Կուլեկտիվներում կիրառվող ներգործութայն միջոցները

Պիոներական կոլեկտիվներում կիրառվող մանկավարժական ներգործութայն միջոցները բազմազան են: «Ի՞նչ ես անում այն յե-րեխաների հետ, վորոնք չարություն, խուլիզանություն են անում և առհասարակ անկարգապահ են»-հարցին արված պատասխաններից պարզվում է, վոր կոլեկտիվներում կիրառվում են ներգործութայն հետևյալ միջոցները (բերում ենք միայն ներգործութայն ամենատարածված տեսակները) .

	Պատանիներ	Աղջիկներ
1. Կոլվարը գրուցում է հանցավ. հետ	75	31
2. Ներգործում է մանկական կուլեկտիվի միջոցով (հարցը քննվում է կուլեկտիվներին հավաքներում, խորհրդում, ողակներում)	69	21
3. Հանցանք գործողին ախտառանք են հանձնարարում	32	16
4. Հետաքննում են կուլեկտիվից վորոշ ժամանակով կամ բոլորովին	46	11
5. Կայացնում են հասարակական պարտավանք, հանդիմանություններ, և ցույց են դնում	27	13
6. Զբաղեցնում են հեռաքրքիր աշխատանքներով (խմբակներ, խաղեր և այլն)	14	10
7. Ներգործում են պատի թերթի միջոցով	14	6
8. Ներգործում են կուսամբաջվածի մտողների և ուսուցչի միջոցով	9	2

Պատանիներ Աղջիկներ

9. Զբղում են պիոներական վրկապ	4	2
10. Հսկողութայն համար կցում են կարգապահ պիոներների	3	2

Պատիժը կուլեկտիվներում

Այս ցանկն արդեն ցույց է տալիս թե վորքան վատ է դրված կոլվարի աշխատանքն այդ բնագավառում: Միայն սրանից արդեն յերևում է, վոր շատ կոլեկտիվներին մանկավարժական պրոցեսում բավական մեծ տեղ են զբաղում այնպիսի մեթոդներ, վորոնք շատ հեռու յեն յերեխաների կոմունիստական դաստիարակութայն մեթոդներից: Այս ցուցակում հիմնական տեղը զբաղում են գանազան բնույթի պատիժներ, ինչպես— «հեռացումները», «հանդիմանությունները», «պարսափանքները», «պատի թերթում քաչ տալը», «վրկապից զրկելը» և այլն:

Կարելի՞ յե արդյոք պատժի միջոցով դաստիարակել այնպիսի «գիտակցական դիսցիպլինա», առանց վորի մեր գործն անհուսալի յե: Վոչ, չի կարելի:

«Այդ դիսցիպլինան չի կարող դաստիարակել անգոր, ստրուկ այն ուսուցիչը, վորը դիմում է պատիժներին»,—ասում է ընկ. Կրուպսկայան:

Պետք է հիմնովին վերացնել պատիժները պիոներական կազմակերպութայն մեջ: Անհրաժեշտ է, վոր պիոներական կոլեկտիվներում լինի այնպիսի դիսցիպլինա, վորի մասին ասել է Վ. Ի. Լենինը:

«Հին բռնի դաստիարակութայն վորխարեն, վոր»

ըր կիրառվում էր բուրժուական հասարակութեան մեջ հակառակ մեծամասնութեան կամքին, մենք գնում ենք բանվորներին և գյուղացիներին գիտակցական դիսցիպլինան, վորոնց միացնում են, հին հասարակութեան հանդեպ ատելութեամբ լցված, իրենց ուժերն այդ սրայքարի համար համախմբելու և կազմակերպելու վճռականութեանը, կարողութեանը և սպասարատակամութեանը, լայնածավալ յերկրի տարածութեան վրա ցրված, իրարից բաժան-բաժան միլիոնավոր և հարյուր միլիոնավոր մարդկանց կամքից միասնական մի կամք ստեղծելու համար, վորովհետև առանց այդ կամքի մենք անխուսափելիորեն կխորտակվենք: Առանց այդ միասնական, առանց բանվորների և գյուղացիների այդ գիտակցական դիսցիպլինային մեր գործն անխուսափի յե»:

Այդպիսի դիսցիպլինա պետք է լինի պիոներական կազմակերպութեան մեջ: Բայց նման դիսցիպլինա չի կարելի ստեղծել պատիժներով, բռնադատութեամբ:

Բայց տեսնենք թե ի՞նչ են գրում կոլվարներն իրենց կիրառած ներգործութեան միջոցների մասին.

«Յեթե կան չարածճի, անկարգապահ պիոներներ, յես նրանց կանչում եմ կոլեկտիվի խորհուրդը և միանգամից չեմ հեռացնում, այլ բացատրում եմ, թե ինչո՞ւ չի կարելի չարութեան անել և նրանց պատիժ եմ տալիս, իսկ յեթե նրանք դրանից հետո ևլի չարութեան անեն, ապա հեռացնում ենք կոլեկտիվից»:

«Հարցը դնում եմ ողակում, նրան հանդիմանութեան ենք տալիս յերեք անգամ, միայն դրանից հետո հեռացնում ենք»:

«Իմ աշխատանքի ընթացքում յես նկատել եմ զանազան անկարգապահ յերեխաների և նրանց հանդեպ կիրառել եմ զանազան միջոցներ: Մի քանիսի վրա ազդում էր, յերբ ընդոր յերեխաների ներկայութեամբ նրանց հանդիմանում ելինք, մասնանշում ելինք նրանց մի շարք վատ արարքները, վումանց վրա ազդում էր այն, յերբ նրանց հետաքրքրող աշխատանք ելինք տալիս, իսկ ուրիշների վրա ազդում էր այն, յերբ սկսում ես ուշադրութեան չդարձնել նրանց վրա, անտեսել, — դա խիստ ազդում է նրանց վրա և նրանք սկսում են աշխատել պատի թերթի, և ուրիշ շատ յեղանակների միջոցով»:

«Ազդում եմ բարոյական—դատարակչական ճանապարհով (ի՞նչ մեծ խոսքեր.— Ի. Ֆ.): Յեթե կան անուղղելիներ, նրանց հեռացնում ենք, դրա շուրջը ստեղծելով այնպիսի պայմաններ, վոր մյուսները զգան»:

«Քննում ենք կոլեկտիվի խորհուրդում և պիոներական դատարանում, վոր շատ լավ է ազդում նրանց վրա: Յես ինքս եմ պիոներական դատարանի նախագահը»:

«Անկարգութեան կամ խուլիգանութեան անող պիոներների հարցը կոլվարը դնում է կոլեկտիվի խորհուրդում, վորտեղ մենք նրանց կանչում ենք և մի լավ մշակում եմք (!) Ի. Ֆ.): Յեթե դրանից հետո նա չուղղվի, վճռում ենք կոլեկտիվից»:

Այ, որինակ, մեզանում յեղավ մի դեպք, յերբ մի պիտներ սկսել եր համոզել մյուս պիտներներին, թե նրանց բանք վատ կլինի, յերբ 30 տարեկան դառնան, փորովհետեւ Մոսկվայում այժմ արդեն կոմունիստներին կախաղան են բարձրացնում: Դրա համար մենք նրան վստահեցինք» (!) Ի. Ֆ.):

«Յերբ յես նկատում եմ, վոր պիտները վատ վարժունք ե ունենում, զրուցում եմ նրա հետ այդ վարժունքի մասին, յերբ չի ոգնում—գործը հանձնում եմ կոլեկտիվի խորհրդին, ընդհանուր հավաքին, վորտեղ հանդիմանություն են տալիս. յերբ այդ ել չի ոգնում, բռնկառ են հայտարարում, վորոչ ժամանակով հանում են վզկապը, և վերջը, յեթե նա աշակերտ ե, հարցր համաձայնեցնելով դպրոցական խորհրդի հետ, հեռացնում են կոլեկտիվից»:

«Աշխատանք ենք հանձնում զբաղեցնելու համար: Դատի յենք յենթարկում կոլեկտիվում: Յուրաքանչյուրի դատ եմք սարքում ակումբում և հրավիրում եմք ծնողներին: Գրում ենք պատի թերթում, վորը շատ լավ ե ազդում նրա վրա»:

«Յեթե կարմիր անկյունում կամ փողոցում անկարգություն են անում, նախ յես համոզում եմ, վոր վերջ տան: Յերբ այդ չի ոգնում, տոմսակ եմ գրում ծնողներին: Յեթե դեպքը պատահում ե ձմեռը, գրկում եմ դահուկներով խաղալուց»:

«Իմ ամբողջ աշխատանքի ընթացքում հանդիպել եմ անկարգապահ չորս հոգու: Ներգործության թյան միջոցները հետևյալներն են յին. 1) անհատա-

պես համոզելը, 2) կանչել կոլեկտիվի խորհուրդը, 3) հասարակական պարսավանք, 4) անուր քրեյ սև տախտակին և հայտարարել թերթում, 5) ուղղելու համար նրան ամբացնել լավ պիտներին»:

«Յերբ չարություն են անում այն յերեխաներ, վորոնց աշխատանք հանձնված չե, նրանց աշխատանք եմ հանձնարարում: Որինակ նշանակում եմ ակումբի հերթապահ»:

«Կոլվարը հանդիմանություն ե տալիս: Կրկնության դեպքում կանչում են կոլեկտիվի խորհուրդը: Հայտնում են ծնողներին: Ժամանակ ե տրվում ուղղվելու համար: Չենք թողնում ներկա լինել ձրի կենոյին, ներկայացումներին կամ յերեկույթներին»:

«Անկարգություն անող յերեխաների հետ յես վարվում եմ ընկերաբար, համոզում եմ, վոր չարությունից ոգուտ չկա: Իսկ յերբ մեզ մոտ յերեխաները շարունակում են անկարգություն անել, նրանց կանչում ենք կոլեկտիվի խորհուրդը և նրանցից պիտներական ազնիվ խոսք ենք առնում, վոր ել անկարգություն չեն անի»:

Կարելի յե ելի շատ նման որինակներ բերել, բայց մեզ թվում ե, վոր սրանք ել բավական են համոզվելու համար, վոր յերեխաների վրա ազդելու ամենավատ միջոցները քիչ տեղ չեն գրավում պիտներական կազմակերպության մեջ:

Իսկ յեթե այժմ մենք դառնանք վորոհիշյալ որինակներին, կտեսնենք, վոր նրանց դաստիա-

բակչական նշանակութիւնը վոչ այլ ինչ է, յեթե վոչ վախ կամ յերկյուղ առաջացնելու միջոց: Այն կոլեկտիվներում, վորտեղ կիրառվում են որինակներում հիշված ներգործութեան միջոցները, պիտները գտնվում են վրնտվելու, հանդիմանութիւն ստանալու, սե տախտակին գրվելու, հետաքրքիր աշխատանքից, զրոսանքից, խաղից զրկվելու, դատարանի կողմից դատապարտվելու, ծնողների կողմից պատժվելու վախի տակ: Սկզբում, յերբ յերեսան նոր ե մտել կոլեկտիվ պատժի սպառնալիքը նրա համար ինչ վոր անտովոր բան է, բայց հետագայում դառնում է վախի օեֆլեքս:

Այստեղ մենք քննեցինք յերեսանների վրա ներգործելու բացասական գործոնները (Փակտորները): Իրանց կողքին շատ պիտներական կոլեկտիվներում գոյութիւն ունի միանգամայն տարբեր, հակադիր մոտեցում յերեսաններին: Այդ կոլեկտիվներում կոլվարները հասկանում են, վոր ամբողջ կոլեկտիվի դիսցիպլինան, ինչպես և յուրաքանչյուր յերեսանի վարմունքը կախված են այն բանից, թե ինչպես է դրված աշխատանքը կոլեկտիվում, և մի շարք այլ պատճառներից, վորոնք վերաբերում են պիտների կյանքին կոլեկտիվից դուրս:

Այդ կոլվարները հասկանում են, վոր նախքան «անկարգապահ» պիտների վերաբերմամբ վորեւե միջոց կիրառելը, պետք է իմանալ, ուսումնասիրել այն պատճառները, վորոնք դրդել են նրան այս կամ այն արարքին:

Կոլվարն ուսումնասիրում է յերեսաններին: Կոլվարի որինակը և աշխատանքը

«Լավ ուսումնասիրում եմ պիտներին: Իմանում եմ, թե ինչու անկարգութիւն է անում: Յեթե նա խուլիգանութիւն է անում, վորովհետեւ աշխատանքը չի բավարարում նրան, ապա նրան ուիրչ աշխատանք եմ հանձնում, իսկ յեթե նա չարութիւն է անում ուրիշ պատճառով, ապա աշխատում եմ խոսել նրա հետ անձնապես, խոսել նրա ծնողների, մյուս պիտներների հետ և իմանալ իսկական պատճառը»:

«Պարզում եմ յերեսանների վատ արարքների դրդապատճառները և աշխատում եմ վերացնել դրանք: Այդպիսի յերեսաններին հանձնարարում եմ պատասխանատու աշխատանք և այլն»:

«Իմ ամբողջ կոլեկտիվը բաղկացած է ուրիշ կոլեկտիվների «թափթփուկներից», այսինքն 58 հոգուց 720/0-ը նախկին խուլիգաններ են, վորոնք վրնտված են մյուս կոլեկտիվներից և դպրոցում միշտ խախտում են դիսցիպլինան: Նախ պարզում եմ նրանց խուլիգանութեան պատճառները, ինչպես և հայտաբերում ենք նրանց հետաքրքրութիւնը վորեւե բանի հանդեպ: Տեսնելով, վոր նրանք սիրում են արհեստով զբաղվել, սիրում են լսել ճանապարհորդական արկածների պատմութիւններ և այլն, աշխատում եմ բավարարել այդ պահանջները:

Այսպես որինակ զրադարանից վերցնում եմ մի պիտք պարտիզանների մասին և կարդում եմ. նրանք սիրով կնստեն մինչև լույս և ուշադրութեամբ կլսեն

յնթերցումը: Իսկ այժմ, հավաքներից առաջ նա-
խադրուչացնում եմ, վոր նրանց համար կհարգամ
հետաքրքիր մի գիրք պայմանով, վոր նրանք կա-
նոնավոր կերպով կզան պարնսպմունքներին, կկատա
րեն առաջադրանքը և այլն: Այժմ յերեխաների մեջ
կատարվել է մեծ փոփոխություն: Գրեթե բոլոր
յերեխաները բաժանորդագրված են «Պիոներսկա-
յա Պրավդա»-յին (40 որ.), զիսցիպլինան լավա-
նում է»:

Յեվ իրոք այս որինակներից յերևում է, վոր
«անկարգապահությունը», «խուլիզանությունը»,
«չարությունը» և այլն չեն գտնվում յերեխայի
ընտելության մեջ կամ չեն հանդիսանում պիոներների
չար մտադրությունները, այլ նրանց արմատը
գտնվում է մի շարք պատճառներում: Գլխավորա-
պես այդ պատճառները կայանում են նրանում, վոր
աշխատանքը չի բավարարում պիոներներին, կամ
կոլեկտիվի կյանքը ընկերական, միաձույլ չէ, ինչ-
պես և կոլեկտիվից դուրս պիոներներին չըջապա-
տող միջավայրի ծանր պայմանները (ընտանիք,
փողոց և այլն): Միայն ուշադիր ուսումնասիրու-
թյունից հետո կարելի յե հայտարերել այն պատ-
ճառները, վորոնք մղել են պիոներներին կատարե-
լու այս կամ այն արարքը: Միայն դրանից հետո
կովարր կիրառում է անհրաժեշտ միջոցները ոգնե-
լու պիոներին կոլեկտիվում աշխատել նորմալ կեր-
պով:

Շատ հաճախ կոլեկտիվներում լինում են այն-
պիսի դեպքեր, յերբ մի վորևէ պիոներ փոխանակ
մասնակցելու հետաքրքիր, ուրախ խաղերի, քաշ-

վում է մի անկյուն և նստում մոայլ դեմքով, կամ
թե հանկարծ լավազույն, կարգապահ պիոներնե-
րից մեկը սկսում է չարություն անել, դոռալ,
կռվել մյուս յերեխաների հետ: Սովորաբար նման
դեպքերում կովարրը, առանց պարզելու նման հան-
կարծական փոփոխության պատճառները, ձեռք է
առնում խիստ, վնասկան միջոցներ (ի ցույց է
դնում, հանդիմանություն, վտարում), այն ինչ
զուցե նրանց տանջում է վորևէ ծանր վիշտ, վոր
կապված է րնտանիքի հետ: Այդ պատճառով նա
խուսափում է ընկերներից, իսկ մի ուրիշը նույն
պատճառներով սկսում է խուլիզանություն անել:
Պարզ է, վոր «խիստ միջոցներով» նրանց չի կարելի
ուղղել: Պետք է ընկերական, սրտալի մոտեցում
ունենալ նրանց, ցույց տալ կոլեկտիվի ոգնու-
թյունը:

Ուրեմն, կոլեկտիվից պահանջվում է—«ընդու
նակ լինել մոտենալու առանձին, ամենանկարգա-
պահ պիոներներին, առնել նրանց իր ազդեցության
տակ, աշխատանքը դարձնել աշխույժ, առույգ,
հետաքրքիր» («К работе по-новому», материал
ЦБ ЮП, № 26): Ահա գլխավորը, վոր պահանջ-
վում է կովարրից: Յեվ այդ գլխավորը շատ կոլ-
վարներ հաջողությամբ կիրառում են իրենց աշ-
խատանքում:

«Յերեխաներն անկարգություն են անում նրա
համար, վոր նրանք վոչնչով զբաղված չեն կամ
պարզապես աշխատանքը նրանց չի բավարարում:
Յերբ նրանց աշխատանք էս տալիս, նրանք վերջ են
տալիս անկարգության և խուլիզանության»:

«Ակումբում, վորտեղ յես աշխատում եմ, հետամնաց մեծահասակները խուլիղանություն էյին անում: Մի քանիսի հետ առանձնապես խոսեցի, առաջարկեցի գրվել խմբակներում: Նրանցից մենք կազմեցինք ընթացիկ քաղաքականության խմբակ, վորովհետև նրանք ցանկանում էյին այդ: Նրանց հետ սլարապում ենք շաբաթը յերկու անգամ: Այժմ նրանք ապումբի ամենաընդունակ ակտիվներն են»:

«Անկարգ և չար յերեխաներին յես լծում եմ այնպիսի աշխատանքի, վորը հետաքրքրում է նրանց, որինակ նկարչություն, յերգ, խաղեր և լավ գրքերի ընթերցում»:

«Պիոներների հավաքին, յերբ յերեխաները չառություն են անում, իսկ այդ ժամանակ յես խոսում եմ, յես դադարում եմ և հանդիստ սպասում, մինչև վոր լռեն: Նման դեպքերում նրանք իսկույն դադարեցնում են անկարգությունը: Յերեմն միայն ստիպված եմ լինում նկատողություն անել, բայց այդ շատ քիչ է պատահում, միայն բացառիկ դեպքերում: Պարզ է, վոր յեթե յերեխաները անկարգություն են անում, ապա դա ունի պատճառներ. պարզում եմ այդ պատճառները և աշխատանքի ընթացքում համապատասխան միջոցներով աշխատում եմ վերացնել»:

«Նախ պարզում եմ, թե ինչու պիոներներն անկարգություն են անում: Գուցե աշխատանքը չի հետաքրքրում նրանց, կամ մի վորևէ այլ պատճառ կա: Յերբ պատճառը պարզ է, կարելի յես միջոցներ ձեռք առնել:

Յերբմն պետք է լինում փոխել աշխատանքը,

յերբմն պետք է լինում խոսել ուսուցչի հետ, վորովհետև նա ինձանից լավ է իմանում: Ծայրահեղ դեպքում պետք է լինում անկարգապահների արարքները քննել ողակային հավաքներում:

Թող իրենք պիոներները, ամբողջ ողակը կուլեկտիվ կերպով աղղեն նրա վրա»:

«Անկարգապահների հետ խոսում եմ վորպես հավասար ընկերների հետ: Նման դեպքերում աշխատում եմ, վոր նրանք հասկանան և գիտակցեն իրենց սխալը: Դրանով ինձ հաջողվեց այնպես անել, վոր յերբ նրանք նորից «ղալմաղալ» են սարքում, գալիս են ինձ մոտ և անկեղծ պատմում են բոլորը»:

Այս որինակները բավական են, վորովհետև համողիչ կերպով վկայում են, վոր շատ կուլվարներ ճիշտ և ուշադիր են մոտենում յերեխաներին: Նրանք ուշադիր լսում են նրանց պահանջները և կարիքները, ուսումնասիրում են այն պատճառները, վորոնք ազդում են նրանց վարմունքի վրա և ձգտում են իրոք մանկավարժական միջոցներով լծել այդ յերեխաներին կուլեկտիվի ընդհանուր աշխատանքին:

Այստեղ հատկապես կարևոր և հետաքրքրական այն է, վոր կուլվարները գտնում և հաշվի յեն առնում յերեխայի հետաքրքրությունը դեպի վորոչ զբաղմունք—նրանք ոգտագործում են այն, ինչ սովորաբար մանկավարժության մեջ կոչում են դումխուստ:

Այսպիսով, յերեխաների դաստիարակության ամենալնասակար յեղանակների—պատիժների—կողմ

քին պիտներական կաղմակերպության մեջ քիչ տեղ
չեն գրավում մանկավարժական ճիշտ մեթոդները,
վորոնց նախատակն է ուսումնասիրել յերեխաների
վարմունքը պայմանավորող պատճառները, աշխա-
տանքը հարմարեցնել յերեխաների հետաքրքրու-
թյուններին և ներգրավել նրանց այդ աշխատանքի
մեջ, իրենց յերեխաների կոլեկտիվ աղղեցությունը
պիտներական որևէքները խախտող ընկերոջ վրա և
այլն: Միայն նման մանկավարժական ճիշտ մեթոդ-
ներով կարելի չէ ստեղծել այնպիսի «գիտակցական»
գիտցիպլինա, առանց վորի «մեր գործն անհուսալի
չէ»:

«Կոլվարը պետք է հիշի, վոր կուլտուրական,
բանվոր դասակարգին նվիրված մարդիկ դաստիար-
ակելու համար ամենավատ միջոցներն են՝ հանդի-
մանությունները, նկատողությունները, վատրում-
ները, իսկ լավագույն միջոցները՝ իրենց պիտներնե-
րի կոլեկտիվ ներգործությունը իրենց ընկերների
վրա և կոլվարի անձնական որինակը:

Որինակը ամենաուժեղ միջոցն է դաստիարա-
կության մեջ, ավելի ուժեղ քան ամենալավ խրատ-
ները» (К работе по-новому», материал ЦБ ЮП) :

4. ԿՈՒՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կոլվարի աշխատանքը կոլեկտիվում բաղկացած
է հետևյալ հիմնական մոմենտներից. նախապատ-
րաստվել աշխատանքի համար, սերտ կապ հաստա-
տել յերեխաների և կոլեկտիվի ինքնավարության
որդանների հետ, յերեխաներին մասնակից դարձնել
աշխատանքին, ապահովել կուլտուրական ուժերի և

հասարակական կաղմակերպությունների ոգնու-
թյունը, ճիշտ փոխհարաբերություններ հաստատել
բջիջի հետ:

Աշխատանքի այս հիմնական մոմենտները հույց
են տալիս, թե վորքան պարզ և միաժամանակ աշ-
խատանքի կոլվարի մանկավարժական աշխատանքը:
Պարզ է, վոր այս դասում մենք չենք կարող լրիվ
լուսաբանել կոլվարների բոլոր աշխատանքների
կաղմակերպումը, գրա համար պահանջվում է գրել
մի քանի հարյուր էջանոց մի գիրք: Այստեղ մենք
գուրկ ենք այդ հնարավորությունից: Ահա թե ինչու
մենք խնդիր ենք դնում ցույց տալ միայն ամենա-
հիմնականը կոլվարների աշխատանքի կաղմակերպ-
ման մեջ:

Աշխատանքի նախապատրաստությունը

«Տեսնենք, թե ինչպե՛ս ենք մենք պատրաստ-
վում հավաքներին: Շարաթ որ է: Կոլվարի ընկեր-
ները աշխատանքը վերջացնելով դնում են առն,
չապելով շորերը փոխել, կարգի բերել իրենց, վոր-
պեսզի յերեկոյան դնան ահումբ կամ հրապարակ:
Իսկ կոլվարը տխուր նայում է նրանց, վորովհետև
նա վոչինչ չի պատրաստել հավաքի համար:

«Կոլեկտիվ, թե հրապարակ, կոլեկտիվ, թե
յերեկոյթ: Այս հարցերը տանջում են կոլվարին, և
վերջիվերջո նա վճռում է «Լավ, առավոտը շուտ
կվերկենամ և կպատրաստվեմ»:

Առավոտը նա վեր է թռչում, շտապ կաղմում
է պլանը, մտատանջվելով այն մասին, թե ինչ նոր
բան կարող է անցկացնել հավաքում (բոլորը հին է,
ձանձրացրել է), և վոչինչ չկերած գլխապատու վա

զում ե կոլեկտիվ: Իհարկե, նա ուշանում է, և յե-
րեխաները նրան ընդունում են անվատահուժամբ:

Հող պատրաստված չէ լուրջ աշխատանքի հա-
մար, և հավաքն անցնում է տաղտկալի, հետևարար
յերեխաները չեն բավարարվում, նրանց մեջ չի
նկատվում աշխատելու ցանկութուն, իսկ կոլվարը
տրտնջում և անիծում է իր բախտը, մտածելով մի
կերպ «չուտով ազատվել կոլեկտիվից» (Վ. Ֆետո-
սեյեվ, «Сбор ограда»):

Ահա մի ցայտուն ուրինակ, թե ինչպե՛ս է կոլ-
վարը պատրաստվում հավաքի համար: Միթե մե-
զանում քի՞չ են նման դեպքեր: Մենք չենք սխալվի,
յեթե ասենք, վոր աշխատանքի այլ տեսակներին
համար նույնպես կոլվարներից շատերը պատրաստ-
վում են անկադմակերպ, շտապ կերպով, առանց
նախորոք լավ մտածելու, թե ինչ պետք է անեն
կոլեկտիվում:

Հասկանալի չէ, վոր նման անլուրջ պատրաս-
տութուն միշտ ունենում է վատ հետևանքներ:
Նման պատրաստության պայմաններում զարմանա-
լի չէ, վոր կոլվարի անցկացրած աշխատանքները
վատ են անցնում, չեն հետաքրքրում յերեխաներին,
չեն տալիս դաստիարակչական կարևոր արդյունք-
ներ: Կոլվարի աշխատանքի նախապատրաստության
թերութուններից մեկն էլ այն է, վոր շատ հաճախ
արհամարհական վերաբերմունք է ցույց տրվում
աշխատանքի պլաններին: Քիչ չեն դեպքերը, յերբ
կոլեկտիվներն աշխատում են առանց պլանի: Իսկ
սովորական յերեույթ է, յերբ պլաններն այնքան
անորոշ և վոչ կոնկրետ են, վոր կոլվարը նույնիսկ չի

նայում նրանց աշխատանքի ժամանակ: Պլան կազ-
մելու և պլանով աշխատելու մասին կխոսվի «կոլեկ-
տիվի աշխատանքի մեթոդիկան» դասում, այստեղ
մենք միայն ընդգծում ենք, վոր առանց նախապես
կազմված կոնկրետ պլանի կոլվարը յերբեք չի կարո-
ղանա ճիշտ կազմակերպել իր աշխատանքը: Իսկ ու-
նենալով պլան, նա կարող է նախորոք վորոշել, թե
ի՛նչ, յե՛րբ և վորտեղ պետք է անց կացնեն աշխա-
տանքը, ուստի և կոլվարը կարող է այնպես դասա-
վորել իր ժամանակը, վոր ժամանակին հանգիստ
սրտով պատրաստվի կոլեկտիվի աշխատանքի հա-
մար, պարասպի ինքնակրթությամբ, գնա գրոսնելու,
կլինո, թատրոն, յերեկույթ և և բավարարի իր կոլ-
տուրական այլ պահանջները:

Կարելի չէ ասել, վոր կոլվարների աշխատանքի
նախապատրաստության գլխավոր թերությունն այն
է, վոր նրանք չեն կարողանում և հաճախ չեն ցան-
կանում յերեխաներին մասնակից դարձնել կոլեկտի-
վի աշխատանքի առանձին տեսակները պատրաստե-
լու և անցկացնելու գործին: Ահա ինչ է գրում իրա-
վացի կերպով այդ մասին ականավոր կոմունիստ-
մտնկալարժներից մեկը՝ Եդվին Գեյրնլեն իր «Ման-
կական կոմունիստական խմբերը» գրքում:

«Այն խմբական ղեկավարը, վորը մտքի ծուլու-
թյան հետևանքով ինքն է կատարում նախապատ-
րաստությունը պրոպագանդիստական հիմնարկի,
երկուրսիայի, խաղի յերեկոների, հավաքագրման
շարաթի և այլնի համար, գործում է ամենաձանր
հանցագործություն մեր որերի հեղափոխական սկրգ
բունֆի հանդեպ (ընդգծումս իմն է. Ի. Ֆ.): Մենք

ուզում ենք, վոր մեր յերեխաներն իրե՛նք վարեն
իրենց դասարանը, իրե՛նք պատվիրեն իրենց գրա-
ֆանուկթյունը, իրե՛նք նշեն եքսիուսիաների պլա-
նը, իրե՛նք կատարեն անխնդիրական պատրաստու-
թյունը, հաշվեն ծախսերը, գտնեն Փինանսավորման
միջոցները, իրենք վարձեն շենքը, մշակեն իրենց
հիմնարկները ծրագրերը, իրենք պատրաստեն տոմ-
սերը, հայտարարություն տան կուսակցական մա-
մուլում, իրենք պայմանավորվեն այն նկարչի հետ,
վորի գործակցությունը կարելի չէ ապահովել:
Խմբի ղեկավարը պարտականությունն է ընկե-
րաբար առաջ մղել յերեխաներին, ղեկավարել, քա-
ջալերել, իսկ կարիք յեղած ղեպզում հեշ-
տացնել այդ աշխատանքները, միաժամանակ միշտ
լինելով իր յերեխաների հետ միասին, խորհրդակ-
ցել նրանց հետ, գործել: Այդպես աշխատող խմբա-
կավարը յերեք չի գանգատվի նյութի պակասու-
թյան մասին՝ յերեխաներին գրադեցնելու և խոր-
հուրդներ տալու համար, ընդհակառակը, նա պետք
է աշխատի մեծ լարվածությամբ, վորպեսզի ի-
վիճակի լինի հետևել յերեխաների աճող ակտիվու-
թյանը և թույլ չտա, վոր նրանք տարվեն յերկրոր-
դական բաներով և շեղվեն ուղիղ ճանապարհից»:

Կովարը և նրա դերը կոլեկտիվի ինֆնավարութեան
որգաններում

Այս մեջբերումից յերևում է, վոր կոլեկտիվի
ղեկավարը հեղափոխական սկզբունքների դեմ չի
մեղանչի միայն այն ժամանակ, յերբ մանուկների
կոլեկտիվում իր ամբողջ գործունեյության ընթաց-
քում անմիջականորեն կհենվի յերեխաների վրա:

Այդ նշանակում է, վոր կոլեկտիվի աշխատանքը
միայն այն ժամանակ ճիշտ դրված կլինի, յերբ յե-
րեխաները իսկապես իրենց կզգան կազմակերպու-
թյան տերերը, յերբ յերեխաների ինքնագործու-
թյունը կանգնած կլինի պատշաճ բարձրության
վրա:

Յերեխաների ինքնագործության զարգացումը
կովարի կողմից՝ պահանջում է նրանից ճիշտ մո-
տենալ յերեխաներին, սերտ կապ հաստատել կոլեկ-
տիվի խորհրդի, ողակի և առհասարակ պիոներկո-
լեկտիվի հետ:

Այսպես, կոլեկտիվի հավաքներում, վորտեղ
կովարը հանդիսանում է հիմնական ղեկավարը, նա
պետք է հիշի, վոր կոլեկտիվում կենտրոնական
գործող անձերը պետք է լինեն յերեխաները: Մինչ-
դեռ հաճախ մոռանում են այդ, կովարը ինքն է
անց կացնում հավաքը և իր ակտիվությամբ յեր-
բեմն ճնշում և խլացնում է յերեխաների նախաձեռ-
նությունը:

Կովարի դերը ընդհանուր հավաքներում պետք
է լինի, անցկացնել միայն վորոչ պարապմունքներ
(գրույց, Ֆիզկուլտուրա և այլն), իսկ ընթացիկ աշ-
խատանքի հարցերը քննելիս և լուծելիս կովարը
միայն ներկա չէ լինում, իսկ հավաքները վարում է
կոլխորհրդի նախագահը: Միաժամանակ կովարը
պետք է ձգտի, վորպեսզի յերեխաներն իրե՛նք
անց կացնեն ընդհանուր հավաքի մյուս մասերը
(խաղեր, յերգ և այլն), դա հնարավորություն է
տալիս ծավալել յերեխաների ձեռներեցությունը,

ինիցիատիվան և ճեշտ գծով զարգացնել նրանց ինքնագործությունը:

Ողակային հավաքները պետք է, անմիջականորեն ղեկավարեն ողակավարները կամ ողակավարների սղնականները, սակայն հավաքների սլանները և ծրագրերը (расписание) մշակվում են կոլխորհրդի նիստերում կոլվարի մասնակցությամբ: Բացի այդ, կոլխորհրդում կոլվարը ողակավարներին սովորեցնում է ողակների աշխատանքի համար անհրաժեշտ զանազան ունակություններ (խաղեր, յերգեր, Ֆիզկուլտուրա և այլն):

Ներկա լինելով ողակային պարասյուսման քննարկներին, կոլվարը չի միջամտում նրանց աշխատանքին: Սակայն ավելի լավ կլինի, յեթե նա չի մտնում պասիվ դիտողի դերում, այլ մասնակցում է ողակային հավաքին ողակի հետ միասին: Նշելով ողակային հավաքներում թույլ տրված անճշտությունները և սխալները, կոլվարը նրանց տալով է կոլխորհրդի նիստին, մտաբերող ողակավարների հետ միասին քննում և միջոցներ է փնտրում այդ սխալներն ուղղելու համար:

Պիոներական կոլեկտիվներում ընտրովի կոլխորհրդների նախագահներ մտցնելուց հետո կոլվարի դերը կոլխորհրդում վորոչ չափով փոխվում է խորհրդի կենտրոնական ղեկավար դեմքից կոլվարը վերածվում է խորհրդի իրավահավասար անդամի: Այդ նշանակում է, վոր կոլվարը պետք է յերեխաներին թողնի իրենց հետաքրքրող հարցերը խորհրդի քննությանը դնելու նախաձեռնությունը, միացյալ ուժերով այդ հարցերը լուծելու համար:

Այդ նշանակում է, վոր կոլխորհրդի հավաքը պետք է պատրաստի, նրան նախագահի և խորհրդի վորոշումների կատարմանը հետևի վոչ թե կոլվարը, այլ նրա ոգնությամբ և խելացի ղեկավարությամբ կոլխորհրդի նախագահը:

Հաճախ, աշխատանքի պրոցեսում պիոներները զանազան հարցեր են տալիս կոլվարին: Յերբեմն նա չի կարողանում պատասխանել այդ հարցերին և ամաչում է խոստովանել:

Այդպես չպետք է լինի: Պետք է ուղղակի ասել պիոներին, վոր չես կարող պատասխանել, և նրա հետ միասին աշխատես գտնել հարցի պատասխանը: Չէ վոր կոլվարը չի կարող լինել ունիվերսալիստ—«ամենագետ», չի կարող և չպետք է լինի կոնսուլտանտ բոլոր հարցերի վերաբերյալ: Բայց նա պետք է կարողանա այդ նպատակի համար ոգտագործել մասնագիտական կրթություն ունեցող մարդկանց, այսինքն այնպիսիներին, վորոնք կարող են յերեխաների հետ տանել այս կամ այն աշխատանքը և տալ ճիշտ բացատրություն հետաքրքրող հարցերին, ինչպես և գրականություն:

Այդպիսի մարդիկ կարող են լինել վոչ միայն մասնագետ կուլտուրական ուժերը հանձին ուսուցչի, բժշկի, գյուղատնտեսի, ինժեների և այլն: այլև վորևէ բնագավառում տեղյակ մարդիկ (կոմյերիտական, տեխնիկ, Ֆիզկուլտուրնիկ, պիոների մայր, վորը գիտե կարել և ղեկավարել կարելիամբակը, հյուսնություն, կոշկակարություն և այլն—իմացող բանվորը, գյուղացին, Ֆիզկուլտուրա իմացող նախկին կարմիր բանակայինը և այլն):

Այն կուլվարը, վորը կարողանում է իրեն չըջապատել մասնագետներով, մեծ չափով հեշտացնում է իր աշխատանքը կուլեկտիվում:

Բայց հաճախ կուլվարները վախենում են ներգրավել մասնագետներին, վախենում են ձեռքից բաց թողնել կուլեկտիվի ղեկավարութունը: Պարզ է, վոր այդ վախն անհիմն է և վնասակար: Իհարկե, չի կարելի վոչ մի բոլոր թողնել կուլեկտիվի ղեկավարութւյան պարտականութւյունները և հանձնել այս կամ այն մասնագետին, բայց և չի կարելի ոգնութւյան չկանչել ոգտակար, հմուտ մարդկանց:

Կուլվարը կուլտուրական ուժերի և հմուտ մարդկանց կազմակերպիչն է

Չանագան հասարակական կազմակերպութւյունները (Պաշր-ավիաքիմը, ՄՈՊՐ, «Յերեխաների բարեկամ», «Անաստվածը», «Տեխնիկան մասսաներին» և այլն) կարևոր աղբյուրներ են, վորտեղից կուլվարը կարող է ստանալ լավ ոգնականներ կուլեկտիվի աշխատանքի համար: Այս տեսակետից կուլվարի խնդիրն է՝ մշտական կապ ունենալ այդ ընկերութւյունների հետ, հարկ յեղած մոմենտին նրանցից համապատասխան ոգնութւյուն ստանալու համար: Կամավոր ընկերութւյունները կարող են ոգնել կուլեկտիվներին վոչ մասնագետներով, այլև կարող են մասնակից դարձնել պիոներներին իրենց աշխատանքին, ինչպես և միջոցներ հատկացնել պիոներական կազմակերպութւյան նյութական բազան ամբայնելու համար:

Կուլվարի և կոմյերիտական բջիջի փոխհարաբերութւյունները

Շատ հաճախ կոմյերիտականը, ուղարկվելով աշխատելու պիոներական կուլեկտիվում կտրվում է կոմյերիտական բջիջից: Մեր նպատակը չէ պարզել այդ յերևույթի պատճառները: Պատճառները բազմազան են: Մի դեպքում այդ կուլվարների մեղքն է, մյուս դեպքում մեղավորը բջիջների բյուրոներն են, իսկ մեծ մասամբ յերկուսն էլ մեղավոր են: Սակայն բջիջից կտրվելու վնասակարութւյունն աշխատանքի համար այնքան ակներև է, վոր առանձին բացատրութւյան կարիք չի զգացվում: Պարզ է, վոր դրանից տուժում է թե՛ կուլեկտիվը, վորը զրկվում է կոմյերիտական ազդեցութւյունից, և թե՛ կոմյերիտական բջիջը, վորը իր ձեռքից բաց է թողնում մանկական մասսաների դասակարգային դաստիարակութւյունը: Յուրաքանչյուր կուլվար, յուրաքանչյուր կոմյերիտական բջիջ պետք է արթուն հետևեն, վորպեսզի պիոներաշխատողները չկտրվեն կոմյերիտական կազմակերպութւյունից: Այդ նշանակում է, վոր բջիջները պետք է աշխատեն կուլվարներին մտցնել բջիջների բյուրոների կազմում, կոմյերիտմիութւյան շարքերում քննութւյան առնել և մշակել այն բոլոր կարևորագույն հարցերը, վորոնք վերաբերում են յերեխաների հետ տարվող աշխատանքին, բյուրոները և բջիջների ընդհանուր ժողովը պետք է անպայման հաստատեն կուլեկտիվի աշխատանքի բոլոր կարեւորագույն ձեռնարկումները, կուլեկտիվին մասնակից դարձնեն

ողնելու կոմյերիտմիութեանը՝ նրա կատարած զանազան աշխատանքներում, և այլն:

Մեզ թվում է, վոր յեթե նման գիծ պահպանվի, անհնար կլինի խզումը կոլեկտիվների և կոմյերիտմիութեան միջև: Ընդհակառակը այդ կստեղծի անհրաժեշտ փոխհարաբերություններ այդ կազմակերպությունների միջև:

ՀԱՐՅԵՐ ԻՆՔՆՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ կադրերի հարցը դառնում է մանկական շարժման վճռական հարցը:
2. Ինչպե՞ս պետք է կատարել կոլվարների առաջադրումը և ամրացումը աշխատանքին:
3. Ի՞նչ ունակություններ, գիտելիքներ և հատկություններ պետք է ունենա կոլվարը:
4. Ի՞նչ է կոլվարի դերը կոլեկտիվում:
5. Ինչպե՞ս է զբված պիոներական կազմակերպութեան մեջ «պարզևների» և «պատիժների» հարցը:
6. Ի՞նչ մասերից է բաղկացած կոլվարի աշխատանքը և ինչպե՞ս պետք է նա կազմակերպի այդ աշխատանքը:



«Ազգային գրադարան»



NL0187480

4472 30 409.

180

И. ФИЛЬЦЕР

**ВОЖАТЫЙ, ЕГО РОЛЬ И РАБОТА
В ПИОНЕРСКОМ КОЛЛЕКТИВЕ**

Гиз ССР Армении, 1934 г., Эривань